իր հաճութեամբ յանձնեց յոյներին եւ Սեբաստիայում սկսեց խաղաղ կեանք վարել: Եւ այդ բոլորը գործողը ովքե՞ր էին, ժողովրդի իշխանները եւ նրա հոգեւոր գլուխը՝ կաթողիկոսը: Այժմ շատ զարմանալի չէ, որ մի անպիտան վարդապետ եւ մի քանի շահամոլ իշխաններ դաւ են դնում մի քանի երիտասարդների դէմ, որոնց նպատակը շատ բարի է եւ համեստ, որոնք, բացի ժողովրդի հանգստութիւնը, ուրիշ բանի չեն ձգտում:

— Բոլորովին ուղիղ է, — պատասխանեց տիկինը, — ես մեր պատմութիւնը չեմ կարդացել, բայց իմ աչքով տեսել եմ, թէ ինչպէս շատ անգամ հայերն իրանք եկել են իմ ամուսնու մօտ եւ միմեանց վրայ մատնութիւններ են արել: Շատ անգամ նոյնը նկատել եմ եւ փաշայի տան մէջ: Թուրքերի մէջ արդէն առած է դարձել ասել՝ թէ «գաւուրների գլուխները չեն միանայ», որ կնշանակէ, թէ հայերի մէջ միաբանութեան չէ կարող կազմուել: Ցաւալի է մի այսպիսի կարծիքը, եւ աւելի ցաւալի է, որ նա ուղիղ է...

Տէր հայրը մի առանձին ուշադրութեամբ լսում էր քրոջ խօսքերը եւ կարծես ուրախանում էր նրա դատողութիւնների վրայ:

— Ես շատ հետաքրքիր եմ եղել ուսումնասիրել մեր ժողովրդի բնաւորութիւնը, — ասաց նա, — բայց մինչեւ այսօր շատ բաներ մնացել են ինձ անհասկանալի: Օրինակ, հայը ոխերիմ է, մատնիչ է, վրէժխնդիր է այն անարգանքի դէմ, որ նա կրում է մի այլ հայից: Բայց եթէ նոյն անարգանքը նա ստանում է տաճիկից, քուրդից, մի խօսքով՝ օտարից, նա ամենայն խոնարհութեամբ համբերում է: Դա, իմ կարծիքով, յառաջ չէ՛ գալիս այն հանգամանքներից, թէ հայը տաճկի եւ քուրդի առջեւ թոյլ է եւ չէ կարող նրանցից պատիւ պահանջել: Այլ աւելի յառաջ է գալիս այն օտարամոլ նախապաշարմունքից, որ հայը տաճկի եւ քուրդի մէջ մի առանձին իրաւունք է ճանաչում՝ իր հետ ամէն կերպ վարուելու: Եւ այսպէս, ոչ միայն պատուի զգացմունքը, այլ հայի բոլոր պահանջումները՝ օտարի եւ իր ազգակցի վերաբերութեամբ՝ միատեսակ չեն:

Տէր հօր խօսելու միջոցին ես նկատեցի նրա քրոջ երեսի վրայ խիստ տխուր արտայայտութիւններ:

— Ես կը բերեմ մի ուրիշ օրինակ, — յառաջ տարաւ նա, — հայ ծառայողը իր պարտաւորութեանց մէջ խարդախ է, երբ նա հայի մօտ է ծառայում: Բայց երբ նա ծառայում է թուրքի մօտ, իր պաշտօնը կատարում է ամենայն հաւատարմութեամբ: Նա հաւատարիմ է մնում ոչ միայն արդար աշխատութիւնների մէջ, այլ որքան ցած, որքան խղճի եւ ազնուութեան ընդդէմ եւս լինէին իր տիրոջ պահանջները, բոլորը նա ճշտութեամբ կատարում է: Կ. Պոլսի համարեա բոլոր նշանաւոր մահմեդական տների սպասաւորները հայեր